



Ուրիշըմ Սարոյեան
Նկար՝ Փոլ Գալլինեանի 1976

Այս գրութիւնը, տպուած «Նալիի»-ի մէջ, Ուրիշըմ Սարոյեանի գրչէն ելած վերջին տողերն են եւ կը կազմեն կերպով մը Սարոյեանի կտակը ուղղուած Սփիւռքի եւ Հայաստանի հայութեան ու հայ գրողներուն: Սարոյեանի պարզ ու թափանցիկ լեզուին ծանօթ մը պիտի նկատէ, թէ ի՞նչպէս խորունկցած է այստեղ իր ոճը, բարդ ու մանուածապատ ըլլալու աստիճան, հաւանաբար մօտալուտ մահուան ճնշումին տակ: Կու տանք նաեւ բնագիրը մեր անգլերէն բաժնի սիւնակներուն մէջ (էջ 16):

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՄԵՐ ՕՐԵՐԸ...



Գրեց՝ ՈՒՐԻՇԸՄ ՍԱՐՈՅԵԱՆ

Անդրանիկ Մառութեանին:

Մեր օրերն են ասոնք: Հայոց օրերն են: Այս օրերուն համար սպասած ենք շատ երկար: Մենք մեզ կենդանի պահեցինք հասնելու այս օրերուն: Եթէ, մեզմէ շատեր տարիքը առած մարդեր են, թերեւս ոչ յատկանշականօրէն հասուն, բայց առնուազն մահկանացուի հասունութեան առաւելագոյն իմաստով՝ սպասումովն էր երկար այն տարիներուն որ հասցուցին մեզ այս օրերուն: Բայց ատոր համար պէտք չունինք անուրախ մնալու: Ուրիշըմ Սարոյեանի անկարողութեան մէջ անմեղունակ բան մը կայ, պիտի թուէր՝ յաւիտենօրէն շարունակել մանուկ մնալ: Արդարեւ, հին օրերու կարգ մը իմաստուններ կը պահանջէին նոյնիսկ որ բոլոր մարդիկը ձգտին յաւերժական մանկութեան վիճակին: Ասիկա դիւրին չէ սակայն: Շարունակուող մանկութիւնը մարդկային ամբողջական փորձառութեանց ընթացքին է որ կը պատահի ինքնաբերաբար, եւ կամ, լաւագոյն պարագային, դադար մըն է, թէեւ վստահաբար անվտանգ: Կ'ըսեմ՝ ասոնք Սփիւռքի հայերուն կենսական օրերն են: Նոյն ատեն կ'ըսեմ նաեւ՝ թէ ասոնք կենսական օրեր են Հայաստանի հայերուն համար եւս: Որովհետեւ կայ Հայաստան մը, ու եթէ չենք հրճուիր այդ պարզ իրողութեամբ, մենք մեզ պէտք է համարենք պարզապէս ուրախանալու անընդունակ, եւ կերպով մը պէտք է լաւագոյնս օգտագործենք այդ ճշմարտութիւնը եւս:

Որոշ տաղանդ մը ունեցած ենք միշտ լաւագոյնս օգտագործելու այն ամէնը որ բաժին ինկած է մեզի՝ Աստուծմէ, ճակատագրէն, կրօնքէն, պատմութենէն, փիլիսոփայութենէն եւ (բաւականին յաճախ) բոլոր նման իրողութիւններու մերժումէն: Իրողութիւններ, որ մեզմէ ոմանք եւ մաս մը մեզմէ իւրաքանչիւրէն անկարելի նկատած են չթափել, երբեք չհամարել անիրական ու անպէտ: Ու երբ պատահեր է այդ, բնագոյով ըրած ենք այն ինչ որ թելադրած է կեանքի օրինադիրքը կամ մարդկային ընկալեալ վարուելակերպի ամենէն արդիական փոփոխանքներէն մին — նահանջ դէպի անհատականութիւն, մեկնում ընտանիքէն, լքել ամէն ակնկալութիւն բարձրաւանդակներու բնակիչ Նայիրիի հայերուս ընտանիքներու միասնութենէն: Եւ թող կրցողը հետամտի իր փրկութեան: Իւրաքանչիւր ոք ըլլայ ինքը ազգը, գոնէ տեսականօրէն: Որովհետեւ, արդարեւ կը պատահի միշտ այն, որ կը հասկցուի թէ անհատը միշտ եղած է եւ է՝ ընտանիքին անդամը: Գաղտնի խորհուրդ մը, հակասութիւն մը, տարաբանութիւն մը (փարատութիւն) չէ ասիկա, այլ կը թուի ըլլալ իրողութիւնը թէ այնքան ատեն որ մարդ ինքզինքն է, այդ չափով է նաեւ իր ամբողջական ընտանիքը, իր ազգը, իր մշակոյթն իսկ՝ հին ու ժամանակակից:

Բնութեամբ անհատապաշտներ ենք, յամենայն դէպս, եւ մեր առաջնահերթ պահանջները մեր անձին համար են: Եթէ այդպէս չըլլար, դժուար պիտի ըլլար պատկերացնել որ կարենայինք ապրած ըլլալ: Բայց վերապրելէ ետք սակայն, մեր անհատականութիւնը (որ կերպով մը երբեք չի յաջողիր մեզ դուրս քաշել մեր ազգային ճշմարտութեան եւ իրականութեան չընդգրկէն) մեզ աւելի զօրացուցած է, ըրած է աւելի անհրաժեշտ իրարու համար եւ մարդկային ամբողջ ընտանիքին, աւելի հարուստ աշխարհային ինչքերով եւ թէ կեանքի աննիթական գանձերով, արուեստի, գիտութեան ու մշակոյթի հզօր բաներով — որ, ըստ բոլոր ժողովուրդներու ժամանակակից գրեթէ բոլոր մասնագէտներուն, կը բնորոշուին անով՝ թէ ինչպէս կ'ողջունենք իրար, բայց մանաւանդ ինչպէս կը բարեւենք օտարները: Ինձի համար հայոց ողջոյնները հիանալի են իրենց ազնուութեան ու ժգնութեամբ եւ նոյնիսկ գթառատութեամբ — օրինակ՝ «ցաւդ տանեմ»: Վստահաբար, բազմաթիւ դարերու փորձառութիւնը անհրաժեշտ եղած պէտք է ըլլայ ժողովուրդի

մը համար, նման ողջոյն մը տալու, նման արտայայտութիւն մը իր խօսակցութեան մասը ընելու:

Թերեւս անակնկալ մը թուի այն, որ ոչ մէկ քաղաքակրթութիւն տոկացած ըլլայ, իմաստ ունեցող կամ նոյնիսկ հզօր քաղաքակրթութիւն մը՝ եթէ չէ ունեցած իր կորիզին մէջ, իր սրտին մէջ իսկ մղումը, ստիպողութիւնը ազնիւ ըլլալու: Այս մէկը կը թուի բնութեան իսկ թելադրանքը ըլլալ, արիւնէն, հողէն, ջուրէն, օդէն եւ բոլոր անանուն եւ անանունութիւն, անձանթ ու անվերծանելի տարրերէն՝ որ միատեղ գործելով կը կազմեն կառոյցն ու ընթացքը ապրող նիւթին — մարդը իր ուղեղով ու զգայարանքներով, գերագոյն զարդը հսկայական այս հրաշքին, որ առանց մարդուն յաւիտենօրէն պիտի մնար ամբողջական խաւարի եւ գաղտնիքի մէջ: Ու մենք Հայերս, թէեւ մէկ փոքր մասը մարդկային ամբողջականութեան, այնուամենայնիւ էութիւնը եւ նոյնիսկ համագումարը այդ ամբողջականութեան, շատ հաւանօրէն, որովհետեւ մեր պատմութեան պատճառով, եւ ջնջուելու մերժումին՝ ի հեճուկս այդ պատմութեան իսկ կողմէ մեր վրայ գործադրուած զագրելի ոճիւրներուն: Ասոնք մեր օրերն են, որովհետեւ վերապրեցանք, ի մի հաւաքեցինք մեր վիրաւոր բեկորները, բուժած ենք մեր շարչարուած ու ցնորած հոգիները եւ այժմ ամբողջ ենք նորէն, վստահօրէն ոչ նուազ ամբողջական քան որեւէ այլ ժողովուրդ այս աշխարհէն, այս ժամանակներուն: Թուեցէք շարքը բոլոր ժողովուրդներուն, հզօրագոյնէն ամենէն ճղճիմը ու ամենէն խոցելին, եւ ստիպուած ենք տեսնելու թէ ոչ մէկ ժողովուրդ աւելի հզօր է կամ աւելի օգտակար կամ աւելի մշակուած եւ բոլորէն աւելի ազնիւ, քան մենք, Հայերս:

Անդրանիկ, բարեկամս, կ'ըսեմ, կը փորձեմ ըսել թէ դուն ինքդ, կեանքդ ցոյց կու տայ այս պարզ ճշմարտութիւնները: Մեր խենդ տղաքն ու մեր խենդ աղջիկները, թէ՛ մայր երկրին Հայաստանի մէջ եւ թէ՛ համայն աշխարհի մէջ կատարած են իրենց գործը եւ անոնք եղած են մեր շունչն իսկ, մեր հացն ու գինին ու միսը, եւ դուն մեր խենդ տղոցմէ մէկն ես, եւ պիտի չտամ անունները միւսներուն կամ անունը մեր խենդ աղջիկներէն ուրիշ մէկուն: Ամէն մարդ գիտէ անոնց անունները եւ շնորհակալ է Աստուծմէ եւ մեր նախահայրերէն անոնց համար: Անոնց շնորհիւ ուղղակիօրէն եկած ըլլալով ինչպէս իրենք կու գան մեր ժողովուրդին ողջ թէ մեռած ամբողջութենէն, վատնուած ու գուրգուրանքով պահուած, մենք ենք Հայերը, եւ ասոնք մեր օրերն են:

Մենք ենք մարդկային ցեղը: Կը խտացնենք ամբողջ մարդկային աշխարհը: Մերն է իրաւունքովը ազնուութեան ընծայաբերութեամբ իրարու հանդէպ եւ ապա օտարին եւ հոսակ՝ նոյնիսկ թշնամիին, որովհետեւ ան եւս մենք է, այնպէս չէ՞, մեզմէ մէկն է, հայ մըն է տարբեր անունով որ կրնայ ազնուութեան հասած չըլլալ, բայց մերն է, եւ նոյնիսկ անոր կ'ըսենք — «Ցաւդ տանեմ»:

Ասոնք մեր օրերն են: Վաստակեր ենք մենք զանոնք: Անոնց պարզ վեհութիւնն է որ կը տօնենք: Մենք ենք, իրարու, խենդ տղաքն ու աղջիկները Նայիրեան, ողջագուրելով բոլոր միւս տղաքն ու աղջիկները թէ մեր սեփական ընտանիքին, ինչպէս նաեւ մարդկային համայն ընտանիքին: Մենք տոկացինք: Մենք հասն'ր ենք: Հո'ս ենք: Պիտի մնանք մինչեւ վերջը: Կամ մինչեւ անվախճանութիւնը, թերեւս, որովհետեւ խենդ ըլլալէ բացի, ազնիւ ենք: Կ'ողջագուրեմ քեզ:

6 Մայիս 1980

Առաւօտեան ժամը 11,40-ին

Ֆրեզնո, Գալիֆորնիա

«Նալիի», 15 Յուլիս 1980

Խորագիրը խմբագրութեան կողմէ: Անգլերէն բնագիրը տեսնել էջ 16: